

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015թ. I կիսամյակի ընթացքում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, քաղաքային համայնքների, դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների, հանրային կազմակերպությունների կողմից կատարված գնումների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ

-2015-

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի I մասի 5-րդ կետով վերապահված գործառույթները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. 1169-Ն հրամանի պահանջը՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը ներկայացնում է 2015թ. առաջին կիսամյակի գնումների վերլուծությունը:

Այն կազմված է պետական կառավարման մարմինների, քաղաքային համայնքների, դրանց ենթակա պատվիրատուների, հանրային կազմակերպությունների կողմից «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրված տվյալների հիմնա վրա և ներառում է ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարված գնումները:

Վերլուծության մեջ ընդգրկված են բոլոր պետական կառավարման մարմինները և 20 քաղաքային համայնքներ: 29 քաղաքային համայնքներ տվյալներ չեն ներկայացրել առաջին կիսամյակում կատարված գնումների վերաբերյալ: Փաստաթղթում ներառված են նաև պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա 431, քաղաքային համայնքների ենթակա 464 պատվիրատուների կատարած գնումները:

Հաշվետու ժամանակահատվածում կատարված գնումների վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացրել 3 հանրային կազմակերպություն: Այս խմբի պատվիրատուների տվյալներն առանձին դեպքերում խիստ սահմանափակ են և ոչ լիարժեք:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2015թ. I կիսամյակի ընթացքում պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների և քաղաքային համայնքների, դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների, հանրային կազմակերպությունների կողմից կատարված գնումների վերաբերյալ, ըստ գնման նախահաշվային և կնքված արժեքների

Վերլուծության օբյեկտը - 75 պետական կառավարման մարմիններ և պետական հիմնարկներ, 20 քաղաքային համայնքներ*, դրանց ենթակայության 895 պատվիրատուներ (այդ թվում՝ 431 պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, 464՝ քաղաքային համայնքների ենթակայության) և 3 հանրային կազմակերպություն

Վերլուծության ժամանակահատվածը - 01.01.2015-30.06.2015թթ.

Վերլուծության առարկան - Իրականացված գնումները, ըստ գնման նախահաշվային և կնքված արժեքի

Վերլուծության նպատակը - Հաշվետու ժամանակահատվածում կատարված գնումների արդյունավետության ուսումնասիրություն

Նախահաշվային գին** - Պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայնքների, դրանց ենթակայության տակ գործող պատվիրատուների կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարված գնումների և հայտարարված ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է ընդհանուր առմամբ 221.561,8 մլն դրամ, որոնցից 32.721,0 մլն դրամ աշխատանքների, 115.355,5 մլն դրամ՝ ծառայությունների և 73.485,3 մլն դրամ՝ ապրանքների գծով:

* Տեղեկատվության բացակայության պատճառով ներառված չեն 20 քաղաքային համայնքների կողմից այս տարվա առաջին կիսամյակում կատարած գնումների տվյալները:

** Վերլուծության մեջ ներառված տվյալները հիմնված են պատվիրատուների ներկայացրած տեղեկատվության վրա:


Կատարված գնումների 25,13 տոկոսը վերաբերում է ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված ցանկում ընդգրկված այլ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերմանը: Նման գնումների նախահաշվային արժեքը եղել է 55.697,1 մլն դրամ, որից 53.009,2 մլն դրամը ուղղվել է ծառայությունների ձեռքբերմանը: Ապրանքների և աշխատանքների դեպքում գումարը կազմել է 2.687,9 մլն դրամ:

Այս եղանակով կատարված գնումների 92,81 տոկոսը բաժին է ընկել պետական կառավարման մարմիններին և պետական հիմնարկներին: Ընդհանուր առմամբ այն հասնում է 51.696,0 մլն դրամի: Գումարի մեծ մասն ուղղվել է ծառայությունների ձեռքբերմանը: Այդ նպատակին հատկացվել է 49.793,5 մլն դրամ: Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկներն իրականացրել են 1.394,1 մլն դրամի ապրանքների և 508,4 մլն դրամի աշխատանքների գնում:

Ստացված տեղեկատվության համաձայն, գնման մյուս բոլոր ձևերով առաջին կիսամյակում պետական կառավարման մարմինները, պետական հիմնարկները, քաղաքային համայնքները, դրանց ենթակայության տակ գործող պատվիրատուները հայտարարել են 165.864,7 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր, որից 32.109,2 մլն դրամը՝ աշխատանքների, 71.409,2 մլն դրամը՝ ապրանքների և 62.346,3 մլն դրամը՝ ծառայությունների գծով (**Գծապատկեր 1**):

Գծապատկեր 1

**2015թ. կիսամյակում հայտարարված ընթացակարգերը ըստ
նախահաշվային արժեքների**



- 1 Աշխատանք
- 2 Ապրանք
- 3 Ծառայություն

Հանրային կազմակերպություններից 2015թ. առաջին կիսամյակում կատարած գնումների վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ տեղեկատվություն է ներկայացրել երեքը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն, «Տրանսգազ» ՍՊԸ-ն, ինչպես նաև «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն: Վերջինիս տվյալները խիստ թերի են և թույլ չեն տալիս լիարժեք պատկերացում կազմել ընկերության կատարած գնումների վերաբերյալ:

Ինչ մնում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին և «Տրանսգազ» ՍՊԸ-ին, ապա այս երկու ընկերությունները միասին հայտարարել են ավելի քան 12.040,5 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր, որից 11.365,0 մլն դրամը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն և 675,5 մլն դրամը՝ «Տրանսգազ» ՍՊԸ-ն: Կազմակերպված գնումները վերաբերել են մեծամասամբ ապրանքների ձեռքբերմանը: Այդպիսի գնումների նախահաշվային արժեքը կազմել է 7.720,7 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում, ներկայացված տեղեկատվության համաձայն, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն կնքել է 7.544,5 մլն դրամի, «Տրանսգազ» ՍՊԸ-ն՝ 675,5 մլն դրամի պայմանագրեր: Կնքված պայմանագրերի շրջանակներում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն ապահովել է 498,2 մլն դրամի խնայողություն, ինչը կազմել է ամփոփված և կայացած մրցույթների

նախահաշվային արժեքի 6,16 տոկոսը: «Տրանսգազ» ՍՊԸ-ն հաշվարկային տնտեսում չի ունեցել:

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները, բացառությամբ ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված ցանկում ընդգրկված այլ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման, գնման տարբեր ձևերով հայտարարել են ավելի քան 84.595,5 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր: Անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հայտարարված ընթացակարգերի նախահաշվային արժեքը նվազել է 22.698,3 մլն դրամով: Այն արտահայտվել է ինչպես ապրանքների, այնպես էլ ծառայությունների դեպքում:

Ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված ընթացակարգերի նախահաշվային արժեքը հաշվետու տարում կազմել է շուրջ 15.432,1 մլն դրամ, ինչը 26.669,1 մլն դրամով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Աշխատանքների գնման համար կազմակերպված ընթացակարգերի նախահաշվային արժեքը նվազել է 1.137,5 մլն դրամով: Ընդհանուր առմամբ իրականացվել է այդպիսի 19.434,3 մլն դրամի ընթացակարգ:

Փոխարենը՝ ավելացել է ապրանքների գնման նպատակով հայտարարված ընթացակարգերի գումարը: 2014թ. առաջին կիսամյակի 44.711,7 մլն դրամի փոխարեն հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները կազմակերպել են 49.729,1 մլն դրամ նախահաշվային արժեքով ապրանքների ձեռքբերման ընթացակարգեր:


Առաջին կիսամյակում կատարված գնումների վերաբերյալ տեղեկություններ ներկայացրած քաղաքային համայնքների կազմակերպած ընթացակարգերի նախահաշվային արժեքը եղել է շուրջ 50.385,4 մլն դրամ (**Գծապատկեր 2**): Գերակշիռ մասը վերաբերել է ծառայությունների ձեռքբերմանը: Դրանք կազմել են ընդհանուր առմամբ 37.026,5 մլն դրամ: Իրականացվել են 11.432,6 մլն դրամի

աշխատանքների կատարման և 1.926,3 մլն դրամի՝ ապրանքների ձեռքբերման ընթացակարգեր:

Տեղեկատվություն ներկայացրած պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքը հաշվետու տարվա առաջին կիսամյակում հասնում է 16.658,2 մլն դրամի, համայնքների ենթականերինը՝ 14.225,5 մլն դրամի: Գումարներն ուղղվել են հիմնականում ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը:

Գծապատկեր 2

2015թ. առաջին կիսամյակում հայտարարված ընթացակարգերը ըստ պատվիրատուների



- 1 Պետական կառավարման մարմիններ և պետական հիմնարկներ
- 2 Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուներ
- 3 Քաղաքային համայնքներ
- 4 Քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուներ

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմիններին և պետական հիմնարկներին բաժին է ընկել գնման տարբեր ձևերով հայտարարված ընթացակարգերի նախահաշվային արժեքի 51 տոկոսը: Տեղեկատվություն ներկայացրած 20 քաղաքային համայնքների կազմակերպած ընթացակարգերի տեսակարար կշիռը կազմել է 30,37 տոկոս:

Առաջին կիսամյակում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կազմակերպած ընթացակարգերից շուրջ 10.095,5 մլն դրամը եղել է բաց, 10.678,9 մլն դրամը՝ բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու, 492,7 մլն դրամը՝ պարզեցված, 1.456,7 մլն դրամը՝ բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով: Մեծ է հատկապես շրջանակային համաձայնագրերով կազմակերպված ընթացակարգերի գումարը: Գնման այս ձևով հայտարարվել է 61.871,7 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգ (**Աղյուսակ 1**):

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հիմնականում պակասել է բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևով կազմակերպված ընթացակարգերի գումարը: 2014թ. 27.762,4 մլն դրամի փոխարեն հաշվետու տարում այս ընթացակարգով կատարված գնումների նախահաշվային արժեքը կազմել է 10.678,9 մլն դրամ: Կրճատվել է գերազանցապես ծառայությունների ձեռքբերման գումարը: 2014թ. 25.522,4 մլն դրամի փոխարեն հաշվետու տարվա առաջին կիսամյակում այդ նպատակին ուղղվել է 5.559,8 մլն դրամ:

613,8 մլն դրամով պակաս է եղել բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով կազմակերպված ընթացակարգերի նախահաշվային արժեքը: Այն հասնում է 1.456,7 մլն դրամի: Նվազել են նաև շրջանակային համաձայնագրերով և բաց ընթացակարգերով հայտարարված գնումները: Եթե առաջին դեպքում տարբերությունը 3.789,7 մլն դրամ է, ապա երկրորդինը՝ 1.093,5 մլն դրամ:

Հաշվետու տարվա առաջին կիսամյակում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած 84.595,5 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգերից ավելի քան 49.729,1 միլիոնը վերաբերել է ապրանքների ձեռքբերմանը: 19.434,3 մլն դրամ են կազմել աշխատանքները և 15.432,1 մլն դրամ՝ ծառայությունները:

Աղյուսակ 1

2015թ. I կիսամյակում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած գնումները ըստ ընթացակարգերի մին ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	6.642,3	2.936,3	516,9	10.095,5
Պարզեցված ընթացակարգեր	58,2	180,0	254,5	492,7
Շրջանակային համաձայնագրեր	7.527,8	45.360,0	8.983,9	61.871,7
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով	4.768,2	350,9	5.559,8	10.678,9
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	437,8	902,0	116,9	1.456,7

Հաշվետու ժամանակահատվածում տեղեկատվություն ներկայացրած 20 քաղաքային համայնքների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է 50.385,4 մլն դրամ, որից 11.432,6 մլն դրամը աշխատանքների, 1.926,3 մլն դրամը՝ ապրանքների և 37.026,5 մլն դրամը՝ ծառայությունների գծով: Քաղաքային համայնքների կազմակերպած գնումների մեծ մասը՝ 30.110,0 մլն դրամ, եղել է բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով: Այս ընթացակարգով միայն ծառայությունների ձեռքբերմանն ուղղված գումարը հասնում է 29.586,2 մլն դրամի: 10.387,3 մլն դրամ է կազմել բաց ընթացակարգերի նախահաշվային արժեքը **(Աղյուսակ 2)**: Շրջանակային համաձայնագրերով հայտարարվել է ավելի քան 2.895,2 մլն դրամի ընթացակարգ: Պարզեցված ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է 1.439,7 մլն դրամ:

Իրականացվել է 5.553,1 մլն դրամի բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնում:

Աղյուսակ 2

2015թ. I կիսամյակում քաղաքային համայնքների հայտարարած գնումները ըստ ընթացակարգերի մլն ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	8.638,0	499,4	1.249,9	10.387,3
Պարզեցված ընթացակարգեր	568,8	145,6	725,3	1.439,7
Շրջանակային համաձայնագրեր	1.575,2	1.123,7	196,3	2.895,2
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով	126,7	157,6	5.268,8	5.553,1
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	523,8	-	29.586,2	30.110,0

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքը հաշվետու ժամանակահատվածում կազմել է շուրջ 16.658,2 մլն դրամ, որից 1.188,6 մլն դրամը՝ աշխատանքների, 12.377,3 մլն դրամը՝ ապրանքների և 3.092,3 մլն դրամը՝ ծառայությունների գծով: Կազմակերպված գնումների գրեթե կեսը շրջանակային համաձայնագրերն են (**Աղյուսակ 3**): Այդպիսի ընթացակարգերի նախահաշվային արժեքը գերազանցում է 7.745,4 մլն դրամը:

Աղյուսակ 3

2015թ. I կիսամյակում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության պատվիրատուների հայտարարած գնումները ըստ ընթացակարգերի մին ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	690,0	1.395,8	1.178,9	3.264,7
Պարզեցված ընթացակարգեր	121,7	184,5	335,8	645,0
Շրջանակային համաձայնագրեր	173,8	7.085,1	486,5	7.745,4
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու	196,6	656,0	1.009,3	1.861,9
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	2,6	3.052,9	64,7	3.120,2
Սահմանափակ ընթացակարգեր	3,8	-	-	3,8
Մրցակցային երկխոսություններ	-	-	17,0	17,0

Տեղեկատվություն ներկայացրած քաղաքային համայնքների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքը առաջին կիսամյակում կազմել է 14.225,5 մլն դրամ: Այն հիմնականում ուղղվել է ապրանքների ձեռքբերմանը և ծառայությունների մատուցմանը: Իրականացվել է 7.376,5 մլն դրամի ապրանքների և 6.795,4 մլն դրամի ծառայությունների գնման ընթացակարգեր: Աշխատանքները կազմել են ընդամենը 53,6 մլն դրամ (**Աղյուսակ 4**):

Աղյուսակ 4

**2015թ. I կիսամյակում քաղաքային համայնքների ենթակայության
պատվիրատուների հայտարարած գնումները ըստ ընթացակարգերի**

մլն ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	-	318,6	-	318,6
Պարզեցված ընթացակարգեր	31,3	3,5	42,2	77,0
Շրջանակային համաձայնագրեր	19,8	6.928,0	81,6	7,029,4
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու	2,5	126,4	6.671,6	6,800,5

Կայացած ընթացակարգերը ըստ թվաքանակի - Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքների, ապրանքների և ծառայությունների գծով պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայնքների և դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կողմից հայտարարվել է ընդհանուր առմամբ 14702 ընթացակարգ, որից 910-ը աշխատանքների կատարման, 8451-ը՝ ապրանքների ձեռքբերման և 5341-ը՝ ծառայությունների մատուցման համար (**Աղյուսակ 5**):

Աղյուսակ 5

Ընթացակարգերի քանակական բնութագիրը

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Կազմակերպված ընթացակարգերի	910	8451	5341	14702

թվաքանակը				
Չկայացած ընթացակարգերի թվաքանակը	26	242	78	346
Կայացած ընթացակարգերի թվաքանակը	867	8109	5218	14194
Չամփոփված ընթացակարգերի թվաքանակը	19	110	44	173

Առաջին կիսամյակում կազմակերպված ընթացակարգերի 64,79 տոկոսը եղել է բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևով: Իրականացվել է այդպիսի 9526 ընթացակարգ: Շրջանակային համաձայնագրերի թիվը 3934 է: Տեղեկատվություն ներկայացրած պատվիրատուները կազմակերպել են 696 բաց և 377 պարզեցված ընթացակարգ: Իրականացվել է մեկ սահմանափակ ընթացակարգ և 4 մրցակցային երկխոսություն (**Աղյուսակ 6**):

Ընթացակարգերի 96,54 տոկոսը կայացել է:

Աղյուսակ 6

2015թ. I կիսամյակում ամփոփված և կայացած ընթացակարգերի թվաքանակը ըստ գնման ձևի

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	146	326	96	568
Շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգեր	218	2866	603	3687

Պարզեցված ընթացակարգեր	103	55	165	323
Սահմանափակ ընթացակարգեր	1	-	-	1
Մրցակցային երկխոսություններ	-	-	4	4
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	35	46	80	161
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու	364	4816	4270	9450

Գնման տարբեր ձևերով պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները հաշվետու ժամանակահատվածում հայտարարել են ընդհանուր առմամբ 2577 ընթացակարգ, որը կազմել է բոլոր ընթացակարգերի 17,52 տոկոսը: Հայտարարված ընթացակարգերից 242-ը եղել է աշխատանքների կատարման, 1112-ը՝ ապրանքների ձեռքբերման և 1223-ը՝ ծառայությունների մատուցման համար: Չկայացած է հայտարարվել 68 ընթացակարգ: Տվյալների ներկայացման պահին ևս 65-ը գտնվել է ընթացքում:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած ընթացակարգերի կեսից ավելին՝ 1370-ը, շրջանակային համաձայնագրերն են: Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևով իրականացված գնումների թիվը հասնում է 1062-ի: Նախորդ տարվա համեմատ դրանք կրճատվել են 205-ով: Փոխարենը՝ շրջանակային համաձայնագրերը 135-ով ավելացել են:

Այս խմբի պատվիրատուներն առաջին կիսամյակում կազմակերպել են 59 բաց և 65 պարզեցված ընթացակարգ: Երկու դեպքում էլ ընթացակարգերի

քանակը նվազել է: 2014թ. նույն ժամանակահատվածում իրականացվել էր 93 բաց և 75 պարզեցված ընթացակարգ:

Եվս 21 ընթացակարգ եղել է բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած ընթացակարգերի 95,26 տոկոսը կայացել է (**Աղյուսակ 7**):

Աղյուսակ 7

2015թ. I կիսամյակում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ամփոփված և կայացած ընթացակարգերի թվաքանակը ըստ գնման ձևի

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	20	11	16	47
Շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգեր	151	717	402	1270
Պարզեցված ընթացակարգեր	14	11	36	61
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	12	4	5	21
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու	37	302	717	1056

Չկայացած ընթացակարգերը ըստ թվաքանակի - Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների, պետական

հիմնարկների, քաղաքային համայնքների և դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կողմից հայտարարված ընթացակարգերից ամփոփվել է 14540-ը, որոնցից 14194-ը կայացել է, 346-ը՝ չի կայացել (**Աղյուսակ 8**): Չկայացածները կազմել են ամփոփված ընթացակարգերի ընդամենը 2,37 տոկոսը: Չկայացած ընթացակարգերի նախահաշվային արժեքը եղել է 6.866,0 մլն դրամ, որից ավելի քան 4.293,8 մլն դրամը վերաբերել է ծառայությունների գնմանը:

Չկայացած ընթացակարգերից 146-ը եղել է շրջանակային համաձայնագրով գնումների կատարման դեպքում: Գնման այդ ձևով հայտարարված և ամփոփված 3833 ընթացակարգերի 3,80 տոկոսը չեղյալ է համարվել:

Չկայացածության ցուցանիշը բարձր է բաց ընթացակարգերում: Կազմակերպված 696 բաց ընթացակարգերից ամփոփվել է 683-ը, որից կայացել է 568-ը, չի կայացել՝ 115-ը: Չկայացած ընթացակարգերը կազմել են ամփոփվածների 16,83 տոկոսը: Տվյալների ստացման պահին դեռևս ընթացքում է գտնվել 14 բաց ընթացակարգ:

Հայտարարված 377 պարզեցված ընթացակարգերից ամփոփվել է 365-ը, որից կայացել է 323-ը, չի կայացել՝ 42-ը: Տվյալների ստացման պահին ընթացքում է եղել 12 նման ընթացակարգ:

Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևով չկայացած է հայտարարվել 41, բանակցային ընթացակարգ հայտարարելով գնման ձևով՝ 2 ընթացակարգ:

Աղյուսակ 8

2015թ. I կիսամյակում չկայացած ընթացակարգերի թվաքանակը ըստ գնման ձևերի

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	1	111	3	115

Շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգեր	9	98	39	146
Պարզեցված ընթացակարգեր	14	8	20	42
Սահմանափակ ընթացակարգեր	-	-	-	-
Մրցակցային երկխոսություններ	-	-	-	-
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	1	1	-	2
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու	1	24	16	41

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ամփոփած 2523 ընթացակարգերից առաջին կիսամյակում չկայացած է հայտարարվել 68-ը: 7-ը՝ եղել է աշխատանքների կատարման, 28-ը՝ ապրանքների մատակարարման և 33-ը՝ ծառայությունների ձեռքբերման դեպքում: Չկայացածները կազմում են ամփոփված ընթացակարգերի 2,69 տոկոսը՝ նախորդ տարվա 3,63 տոկոսի դիմաց:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից հայտարարված և չկայացած ընթացակարգերի գերակշիռ մասը բաժին է ընկել շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումներին՝ 68-ից 60-ը:

Առաջին կիսամյակում ամփոփված 49 բաց ընթացակարգերից չի կայացել 2-ը կամ 4,08 տոկոսը: Այս ցուցանիշը վերջին երկու տարիներին էապես բարելավվել է:

Համեմատության համար ասենք, որ 2013թ. նույն ժամանակահատվածում չէր կայացել բաց ընթացակարգերի 26,00, իսկ 2014թ.՝ 6,32 տոկոսը:


Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած պարզեցված ընթացակարգերից չի կայացել 2-ը: Այն կազմել է ամփոփվածների 6,15 տոկոսը:

Տեղեկատվություն ներկայացրած 20 քաղաքային համայնքներ առաջին կիսամյակում իրականացրած 1628 ընթացակարգերից ամփոփել են 1602-ը: Չկայացած է հայտարարվել 60-ը կամ ընթացակարգերի 3,74 տոկոսը:

Կնքված պայմանագրեր - Հաշվետու տարվա առաջին կիսամյակում պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայնքների և դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կողմից հայտարարված 165.864,7 մլն դրամ նախահաշվային արժեքով գնումների դիմաց կնքվել է 146.951,5 մլն դրամի պայմանագիր: Դրանից 30.610,8 մլն դրամը աշխատանքների, 59.696,0 մլն դրամը՝ ապրանքների և 56.644,7 մլն դրամը՝ ծառայությունների գծով (**Գծապատկեր 3**): Տվյալների ստացման պահին դեռևս չամփոփված գնումների նախահաշվային արժեքը կազմել է 5.355,9 մլն դրամ: Չամփոփվածների մեծ մասը՝ 3.812,6 մլն դրամը, եղել են ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգերը:

Գծապատկեր 3

2015թ. I կիսամյակում կնքված պայմանագրերը ըստ ապրանք, աշխատանք, ծառայության




- 1 Աշխատանք
- 2 Ապրանք
- 3 Ծառայություն

Առաջին կիսամյակում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած 84.595,5 մլն դրամ նախահաշվային արժեքով գնումների շրջանակներում կնքվել է 71.684,0 մլն դրամի պայմանագիր: Քաղաքային համայնքների կնքած պայմանագրերի գումարը կազմել է 48.872,0 մլն դրամ: Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուներ կնքել են 12.808,3 մլն դրամի, քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուները՝ 13.587,1 մլն դրամի պայմանագրեր (**Գծապատկեր 4**):

Գծապատկեր 4

2015թ. I կիսամյակում կնքված պայմանագրերը ըստ պատվիրատուների



- 1 Պետական կառավարման մարմիններ և պետական հիմնարկներ
- 2 Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուներ
- 3 Քաղաքային համայնքներ
- 4 Քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուներ

Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները հաշվետու ժամանակահատվածում ձեռք են բերել ապրանքների գնման շուրջ 42.004,0 մլն դրամի պայմանագրեր (**Աղյուսակ 9**): Ծառայությունների ձեռքբերման պայմանագրեր կազմել են 10.771,8 մլն դրամ, աշխատանքներինը՝ 18.908,2 մլն դրամ:

Կնքված պայմանագրերի մեծ մասը վերաբերել է շրջանակային համաձայնագրերին: 71.684,0 մլն դրամ պայմանագրային արժեքով գնումներից 50.699,1 միլիոնը կամ ավելի քան 70,72 տոկոսը եղել է շրջանակային համաձայնագրերով: Գնման այդ ձևով պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները ձեռք են բերել հիմնականում ապրանքներ: Ընդհանուր առմամբ այդպիսի պայմանագրերի գինը հասնում է 38.692,0 մլն դրամի: Այս ընթացակարգով գնվել է շուրջ 7.488,3 մլն դրամի աշխատանք և 4.518,8 մլն դրամի ծառայություն:

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից պարզեցված ընթացակարգով կազմակերպված գնումների շրջանակներում կնքվել է 450,4 մլն դրամի պայմանագիր:

Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևով կնքված պայմանագրերի գումարը հասնում է 10.524,2 մլն դրամի: Գնման այդ ձևով ավելի հաճախ ձեռք են բերվել ծառայություններ: Առաջին կիսամյակում այդ նպատակով կնքվել է գրեթե 5.447,6 մլն դրամի պայմանագիր: 4.760,7 մլն դրամի շրջանակներում բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևով կնքվել են աշխատանքների կատարման պայմանագրեր: Ապրանքների մատակարարման պայմանագրերը կազմել են 315,9 մլն դրամ:

Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները բաց ընթացակարգով հայտարարված շուրջ 10.095,6 մլն դրամ նախահաշվային արժեքով գնումների շրջանակներում կնքել են 8.593,2 մլն դրամի պայմանագրեր, որից 6.172,4 մլն դրամը՝ աշխատանքների կատարման, 1.959,7 մլն դրամը՝ ապրանքների մատակարարման և 461,1 մլն դրամը՝ ծառայությունների գնման նպատակով: Տվյալների հավաքագրման ավարտին դեռևս ամփոփված չի եղել 1.180,5 մլն դրամ գումարով հայտարարված բաց ընթացակարգ:

Աղյուսակ 9

2015թ. I կիսամյակում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կնքած պայմանագրերը ըստ ընթացակարգերի մլն ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	6.172,4	1.959,7	461,1	8.593,2
Պարզեցված ընթացակարգեր	49,5	171,6	229,3	450,4
Շրջանակային համաձայնագրեր	7.488,3	38.692,0	4.518,8	50.699,1
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու	4.760,7	315,9	5.447,6	10.524,2
Բանակցային	437,2	864,8	114,9	1.416,9

ընթացակարգեր հայտարարելով				
------------------------------	--	--	--	--

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքային համայնքների հայտարարած 50.385,4 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգերի շրջանակներում կնքված պայմանագրերի գինը կազմել է 48.872,0 մլն դրամ, որից 10.953,3 մլն դրամը աշխատանքների կատարման, 1.449,7 մլն դրամը՝ ապրանքների մատակարարման և 36.468,9 մլն դրամը՝ ծառայությունների ձեռքբերման նպատակով (**Աղյուսակ 10**):

Քաղաքային համայնքների կողմից կնքված պայմանագրերի գերակշիռ մասը՝ շուրջ 30.103,8 մլն դրամը, եղել է բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով: Այդ ձևով քաղաքային համայնքները ձեռք են բերել միայն 29.585,8 մլն դրամի ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Բաց ընթացակարգերով կնքվել է 9.704,7 մլն դրամի պայմանագիր՝ մեծամասամբ աշխատանքների կատարման նպատակով: Այդպիսի պայմանագրերի գինը գերազանցում է 8.301,2 մլն դրամ: 987,9 մլն դրամ է կազմել ծառայությունների գնումը:

Շուրջ 2.455,9 մլն դրամ են կազմել շրջանակային համաձայնագրերը:

Քաղաքային համայնքները հաշվետու ժամանակահատվածում պարզեցված ընթացակարգերով կնքել են 1.205,7 մլն դրամի պայմանագրեր: Եվս 5.401,8 մլն դրամ են եղել բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևերով կնքված պայմանագրերը, որոնք վերաբերել են հիմնականում ծառայությունների մատուցմանը: Այդպիսի պայմանագրերի գինը գերազանցել է 5.128,7 մլն դրամը:

Աղյուսակ 10

**2015թ. I կիսամյակում քաղաքային համայնքների կնքված պայմանագրերը ըստ
ընթացակարգերի
մլն ՀՀ դրամ**

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	8.301,2	415,5	987,9	9.704,6
Պարզեցված ընթացակարգեր	457,1	132,4	616,1	1.205,6
Շրջանակային համաձայնագրեր	1.560,5	745,1	150,3	2.455,9
Բանակցային ընթացակարգ առանց հայտարարելու	116,4	156,7	5.128,7	5.401,8
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	518,0	-	29.585,8	30.103,8

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գործող պատվիրատուները 14.658,2 մլն դրամ նախահաշվային արժեքով գնումների շրջանակներում կնքել են 12.808,3 մլն դրամի պայմանագրեր (**Աղյուսակ 11**): Դրանց գերակշիռ մասը՝ ավելի քան 9.469,7 մլն դրամը, վերաբերել է ապրանքների ձեռքբերմանը, որն իրականացվել է հիմնականում շրջանակային համաձայնագրերով: Այդպիսի գնումների պայմանագրային գինը կազմել է 5.802,5 մլն դրամ:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գործող պատվիրատուները ծառայությունների գծով կնքել են 2.630,5 մլն դրամի պայմանագրեր: Կնքված պայմանագրերի գրեթե կեսը վերաբերել է շրջանակային համաձայնագրերով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերմանը:

Աղյուսակ 11

2015թ. I կիսամյակում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կնքած պայմանագրերը ըստ ընթացակարգերի մլն ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	274,7	1.090,5	1.125,7	2.490,9
Պարզեցված ընթացակարգեր	112,7	103,8	272,0	488,5
Շրջանակային համաձայնագրեր	122,2	5.802,5	355,6	6.280,3
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու	192,2	620,8	806,5	1.619,5
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	2,5	1.852,1	53,7	1.908,3
Սահմանափակ ընթացակարգեր	3,7	-	-	3,7
Մրցակցային երկխոսություններ	-	-	17,0	17,0

Համայնքների ենթակայության տակ գործող պատվիրատուները հաշվետու ժամանակահատվածում հայտարարել են 14.225,5 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր, որոնց շրջանակներում կնքել են 13.587,1 մլն դրամի պայմանագրեր (**Աղյուսակ 12**): Դրանց մեծ մասը վերաբերել է ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը: Այդպիսի պայմանագրերի գումարը ապրանքների դեպքում կազմել է 6.772,5 մլն դրամ, ծառայությունների դեպքում՝ 6.773,4 մլն դրամ: Համայնքների ենթակայության տակ գործող պատվիրատուները ապրանքները ձեռք են բերել հիմնականում շրջանակային համաձայնագրերով՝ 6.369,9 մլն դրամ, իսկ

ծառայությունները՝ բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման ձևով՝ 6.671,1 մլն դրամ:

Աղյուսակ 12

2015թ. I կիսամյակում քաղաքային համայնքների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կնքած պայմանագրերը ըստ ընթացակարգերի

մլն ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	-	274,5	-	274,5
Պարզեցված ընթացակարգեր	20,1	3,5	29,0	52,6
Շրջանակային համաձայնագրեր	18,6	6.369,9	73,2	6.461,7
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու	2,4	124,6	6.671,2	6.798,2

Չկայացած գնումներ – Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, քաղաքային համայնքների, դրանց ենթակա պատվիրատուների կողմից հայտարարված 165.864,7 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգերից չի կայացել 6.866,0 միլիոնը (**Աղյուսակ 13**): Գումարի մեծ մասը՝ 4.293,2 մլն դրամը, վերաբերում է ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգերին: Չեն կայացել 2.249,2 մլն դրամի ապրանքների մատակարարման և 322,9 մլն դրամի՝ աշխատանքների կատարման ընթացակարգեր:

Չկայացած ընթացակարգերի մեծ մասը շրջանակային համաձայնագրերն են: Ընդհանուր առմամբ չի կայացել նման 4.684,4 մլն դրամի ընթացակարգ: 1.233,6 մլն դրամ է կազմել չկայացած բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման

ծնով իրականացված գնումների գումարը: Բացերից չկայացած է հայտարարվել 566,1 մլն դրամի ընթացակարգ:

Տրամադրված տեղեկատվության համաձայն, պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կազմակերպած գնումներից չի կայացել 3.972,2 մլն դրամի ընթացակարգ: Գերակշիռ մասը ծառայությունների մատուցման համար հայտարարված գնումներն են: Դրանք կազմել են 3.738,1 մլն դրամ, ինչը համարժեք է ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված ընթացակարգերի նախահաշվային արժեքի 24,22 տոկոսին:

Չկայացածության ցուցանիշն անհամեմատ փոքր է աշխատանքների և ապրանքների դեպքում: Եթե առաջինի դեպքում չի կայացել 40,6 մլն դրամի, ապա երկրորդի դեպքում՝ 193,5 մլն դրամի ընթացակարգ:

Չկայացած գնումները կազմել են պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքի 4,69 տոկոսը: Դրանք հիմնականում վերաբերել են շրջանակային համաձայնագրերին՝ 3.972,2 մլն դրամից 3.871,0 մլն դրամը:

Քաղաքային 20 համայնքների կազմակերպած գնումներից առաջին կիսամյակում չի կայացել 929,1 մլն դրամի ընթացակարգ: Այն կազմել է հայտարարված գնումների նախահաշվային արժեքի 1,84 տոկոսը:

Աղյուսակ 13

2015թ. I կիսամյակում չկայացած գնումները ըստ ընթացակարգերի

մլն ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	214,4	103,3	248,4	566,1
Պարզեցված ընթացակարգեր	79,4	38,6	123,4	241,4
Շրջանակային համաձայնագրեր	28,3	868,1	3.788,0	4.684,4


Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու	0,3	6,1	134,0	140,4
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	0,6	1.232,9	-	1.233,5

Մասնակիցություն- 2015թ. առաջին կիսամյակում պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայնքների և դրանց ենթակա պատվիրատուների կողմից հայտարարված 14702 ընթացակարգերից ամփոփվել է 14540-ը: Ամփոփված ընթացակարգերի մասնակիցների թիվը կազմել է 26200, որից 1983-ը՝ աշխատանքների կատարման, 17632-ը՝ ապրանքների մատակարարման և 6585-ը՝ ծառայությունների մատուցման ընթացակարգերի մասնակից: Միջին մասնակցությունը 1,80 է: Հաշվետու ժամանակահատվածում մասնակցությունը համեմատաբար բարձր է ապրանքների ձեռքբերման համար հայտարարված ընթացակարգերի դեպքում՝ 2,11 (**Գծապատկեր 5**):

Հայտարարված ընթացակարգերից մասնակցության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է շրջանակային համաձայնագրերի դեպքում: Միջին մասնակցությունն այստեղ 3,59 է: Ընդհանուր առմամբ շրջանակային համաձայնագրերով կատարված գնումների մասնակիցների թիվը հասնում է 14152-ի: Առաջին կիսամյակում գնումների հայտատուների 54,01 տոկոսը եղել է շրջանակային համաձայնագրերով կատարված գնումների մասնակից: Բաց ընթացակարգերի միջին մասնակցությունը 1,98 է, պարզեցվածներինը՝ 1,58:

Գծապատկեր 5

2015թ. I կիսամյակում մասնակցության ցուցանիշները ըստ գնման ձևերի



- 1 Բաց ընթացակարգեր
- 2 Շրջանակային
- 3 Պարզեցված ընթացակարգեր
- 4 Սահմանափակ
- 5 Մրցակցային երկխոսություններ
- 6 Բանակցային ընթացակարգեր
- 7 Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու
- 8 Ընդամենը

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից առաջին կիսամյակում հայտարարված 2577 ընթացակարգերից ամփոփվել է 2523-ը: Մասնակցել է 6205 մատակարար, որից 596-ը՝ աշխատանքների, 3577-ը՝ ապրանքների և 2032-ը՝ ծառայությունների գծով: Միջին մասնակցությունը եղել է 2,46: Մասնակցությունը բարձր է հատկապես ապրանքների մատակարարման համար՝ մեկ ընթացակարգին 3,33 մասնակից:

Հաշվետու ժամանակահատվածում շրջանակային համաձայնագրերով պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից կազմակերպված 1370 ընթացակարգերին եղել է 4587 մասնակից: Միջինը մեկ ընթացակարգին ներկայացվել է 3,35 հայտ: Շրջանակային համաձայնագրերով

պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից ամենաբարձր մասնակցությունն ապահովվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայության» իրականացրած ընթացակարգերում՝ միջին մասնակցությունը եղել է 7,71: Նման 7 ընթացակարգին մասնակցել է 54 մատակարար: ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կազմակերպած 11 շրջանակային համաձայնագրերին ներկայացվել է 60 հայտ: Միջին մասնակցությունը հասնում 5,45-ի:

Շրջանակային համաձայնագրերով կատարված գնումներին մասնակցության ցածր ցուցանիշ են ունեցել պետական կառավարման համակարգի մի շարք մարմիններ: Մասնավորապես ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի կազմակերպած 24 այդպիսի ընթացակարգերին ներկայացվել է նույնքան հայտ (**Տեղեկանք 1**): (Տեղեկանքները կցվում են):

Հաշվետու ժամանակահատվածում բաց ընթացակարգ է իրականացրել 17 պետական կառավարման մարմին և պետական հիմնարկ: Կազմակերպված 59 բաց ընթացակարգերին մասնակցել է ընդհանուր առմամբ 209 մատակարար: Միջին մասնակցությունը 3,54 է:

Բաց ընթացակարգերին ամենաբարձր մասնակցությունն ապահովվել է ՀՀ Արարատի մարզպետարանը: Իրականացված այդպիսի 1 ընթացակարգին մասնակցել է 28 մատակարար: ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ կազմակերպած 3 բաց ընթացակարգերին ներկայացվել է 60 հայտ: Միջինը մասնակցությունը եղել է 20,00: Բաց ընթացակարգեր իրականացրած պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից 6-ի դեպքում միջինը մասնակցությունը 1 է (**Տեղեկանք 2**):

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած պարզեցված ընթացակարգերին միջին մասնակցության ցուցանիշը 1,58 է: Հաշվետու ժամանակահատվածում պարզեցված ընթացակարգերին մասնակցությունը համեմատաբար բարձր է եղել ՀՀ Ազգային ժողովի դեպքում: Հայտարարված 1 նման ընթացակարգին մասնակցել է 4 մատակարար: ՀՀ ՔՆ

«Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ կազմակերպած 2 պարզեցված ընթացակարգերին ներկայացվել է 6 հայտ: Միջին մասնակցությունը 3,00:

26 պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կեսը իրականացված պարզեցված ընթացակարգերին ունեցել է ընդամենը 1 մասնակից **(Տեղեկանք 3):**

Հաշվետու ժամանակահատվածում միջին մասնակցության ցուցանիշը 1,19 է պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների իրականացրած բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևի դեպքում: Այդ եղանակով կատարված գնումներին հիմնականում եղել է մեկ մասնակից: Չնայած կան նաև այդպիսի ընթացակարգեր, որոնց ներկայացվել են մեկից ավելի հայտեր: Մասնավորապես ՀՀ քաղաքաշինության նախարարության իրականացրած նման 6 ընթացակարգին մասնակցել է 20 մատակարար: Միջինը՝ մեկ ընթացակարգին եղել է 3,33 մասնակից: ՀՀ էկոնոմիկայի նախարարության դեպքում 15 այդպիսի ընթացակարգին ներկայացվել է 43 հայտ. միջինը մեկ ընթացակարգին 2,87 հայտ **(Տեղեկանք 4):**

Բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով առաջին կիսամյակում գնումներ է կատարել 7 պետական կառավարման մարմին և պետական հիմնարկ: Իրականացվել է այդպիսի 21 ընթացակարգ, որոնց մասնակցել է 44 մատակարար: Միջին մասնակցությունը 2,10 է: Այդպիսի ընթացակարգեր են կազմակերպել ՀՀ նախագահի աշխատակազմը, ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ԿԱ ոստիկանություն և այլն: ՀՀ ԿԱ ոստիկանություն իրականացրած այդպիսի 2 ընթացակարգին եղել է 11 հայտ:

Այս ընթացակարգով կազմակերպած գնումներին մասնակցությունը ցածր է եղել ՀՀ ՊՆ, ՀՀ բնապահպանության նախարարության, ինչպես նաև ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի դեպքում՝ միջինը 1 հայտ **(Տեղեկանք 5):**

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում քաղաքային համայնքների իրականացրած 1628 ընթացակարգերից ամփոփվել է 1602-ը: Դրանց մասնակցել է

3141 մատակարար, որից 845-ը՝ աշխատանքների, 1489-ը՝ ապրանքների և 807-ը՝ ծառայությունների ձեռքբերման համար: Միջին մասնակցությունը 1,96 է: Մասնակցությունը համեմատաբար բարձր է աշխատանքների և ապրանքների դեպքում: Առաջինում այն կազմել է 2,59, երկրորդում՝ 2,44: Տեղեկատվություն ներկայացրած քաղաքային համայնքները շրջանակային համաձայնագրերով կատարված գնումների ժամանակ ապահովել են մեկ ընթացակարին միջինը 5,02 հայտ: Բարձր է եղել նաև բաց ընթացակարգերի մասնակցությունը՝ 3,16: Աշխատանքների դեպքում այն հասել է ընդհուպ մինչև 4,26-ի:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գործող պատվիրատուների կազմակերպած ընթացակարգերի միջին մասնակցությունը 1,29 է: Մասնակցության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է շրջանակային համաձայնագրերի դեպքում՝ մեկ ընթացակարգին ներկայացվել է 2,63 հայտ:

Մասնակցության ցուցանիշը անհամեմատ բարձր է քաղաքային համայնքների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների մոտ՝ 2,55: Աշխատանքների դեպքում այն հասնում է ընդհուպ մինչև 3,55-ի: Ապրանքների մատակարարման համար կազմակերպված ընթացակարգերի մասնակցությունը 3,11 է: Ցածր է ծառայությունների ձեռքբերման նպատակով կատարված գնումների մասնակցությունը՝ մեկ ընթացակարգին 1,17 հայտ:

Մերժված մասնակիցներ - Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, քաղաքային համայնքների, դրանց ենթակա պատվիրատուների կողմից հայտարարված ընթացակարգերին ներկայացված 26200 հայտերից 644-ը մերժվել է: Մերժվածների գերակշիռ մասը եղել են ապրանքների մատակարարները: Այդպիսի հայտերի թիվը հասնում է 458-ի: Աշխատանքների դեպքում մերժվել է 71, ծառայությունների դեպքում՝ 115 մասնակից: Մերժվածները կազմել են մասնակիցների 1,74 տոկոսը:

Մերժվածները եղել են հիմնականում շրջանակային համաձայնագրերի հայտատուներ: Այս ընթացակարգից մերժում է ստացել 531 մասնակից: Մեծ մասը՝

389-ը, ապրանքների մատակարարման համար ներկայացված հայտերն են: Մյուս ընթացակարգերում մերժումները բաշխվել են հետևյալ կերպ. բաց ընթացակարգեր՝ 70 մասնակից, պարզեցված ընթացակարգեր՝ 31 մասնակից, բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու՝ 9 մասնակից և բանակցային ընթացակարգեր հայտարարելով՝ 3 մասնակից:

Ստացված տեղեկատվության համաձայն, պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուների կազմակերպված ընթացակարգերին ներկայացված 9916 հայտերից 206-ը մերժվել է: Այլ կերպ, գնումների գործընթացների մասնակիցների 31,98 տոկոսին մերժել են պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուները:

Մերժված հայտատուներից 15-ը եղել են քաղաքային համայնքների, 13-ը քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուների հայտարարած ընթացակարգերի մասնակից:

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կազմակերպած գնման գործընթացներից մերժվել է 410 մասնակից, որից 44-ը՝ աշխատանքների կատարման, 268-ը՝ ապրանքների մատակարարման և 98-ը՝ ծառայությունների մատուցման դեպքում: Մերժվածները կազմել են մասնակիցների 6,60 տոկոսը:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կազմակերպած 59 բաց ընթացակարգերին ներկայացվել է 209 հայտ, որից 20-ը մերժվել է: Բաց ընթացակարգերի դեպքում մերժում է ստացել մասնակիցների 9,57 տոկոսը:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կազմակերպած բաց ընթացակարգերի 20 մերժվածներից 5-ը եղել է ՀՀ պաշտպանության նախարարության ընթացակարգերի մասնակից: Վերջինս հայտարարել է 24 բաց ընթացակարգ, որին մասնակցել է 35 հայտատու: Նրանց 14,29 տոկոսը մերժվել է: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ

իրավիճակների, ինչպես նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունները հայտարարել են 1-ական բաց ընթացակարգ, որոնց ներկայացված 3-ական հայտերից 1-ը մերժվել է: Ընդհանուր առմամբ նման ընթացակարգ իրականացրած 17 պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից 10-ը մերժած մասնակիցներ չեն ունեցել **(Տեղեկանք 6):**

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած 65 պարզեցված ընթացակարգերին ներկայացրել է 103 հայտ, մերժվել է՝ 3-ը: Երկուսը եղել են ՀՀ ԿԱ ոստիկանության ՃՈ, մեկը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կազմակերպած պարզեցված ընթացակարգերի մասնակից **(Տեղեկանք 7):**

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների իրականացրած 1370 շրջանակային համաձայնագրերին մասնակցել է 4587 հայտատու: Մերժում է ստացել 385-ը կամ 8,39 տոկոսը: Մերժումների ցուցանիշը բարձր է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրականացրած գնումների դեպքում: Նման 6 ընթացակարգերին ներկայացվել է 13 հայտ, որոնցից 8-ը կամ 61,54 տոկոսը մերժվել է: Մասնակիցների 51,28 տոկոսին մերժել է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Ավելի քան 2 տասնյակ պատվիրատուներ շրջանակային համաձայնագրերով իրականացված գնման գործընթացներից մերժված մասնակիցներ չեն ունեցել **(Տեղեկանք 8):**

Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևով կազմակերպված 1062 ընթացակարգերից մերժում է ստացել ընդամենը 2 մասնակից: Դրանց ներկայացվել է ընդհանուր առմամբ 1262 հայտ: Այս ընթացակարգով մեկական մերժված մասնակից են ունեցել ՀՀ ԿԱ ոստիկանության ՊՊԳ վարչությունը և ՀՀ քաղաքաշինության նախարարությունը **(Տեղեկանք 9):**

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կազմակերպած 21 բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ժամանակ հաշվետու ժամանակահատվածում մերժված մասնակիցներ չեն եղել:

Գնման գործընթացից հրաժարվածներ – 2015թ. առաջին կիսամյակում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, քաղաքային համայնքների, դրանց ենթակա պատվիրատուների կողմից հայտարարված ընթացակարգերին մասնակցած 23 հայտատու հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից (**Աղյուսակ 14**): Դրանցից 17-ը եղել է ապրանքների ձեռքբերման, 2-ը՝ աշխատանքների կատարման և 4-ը՝ ծառայությունների մատուցման համար հայտարարված ընթացակարգերի մասնակից: Բոլորից հաճախ՝ 23-ից 22-ը, մասնակիցները հրաժարվել են շրջանակային համաձայնագրերով կազմակերպած ընթացակարգերից: Մեկ մասնակից հրաժարվել է պարզեցված ընթանցակարգից:

Աղյուսակ 14

2015թ. I կիսամյակում գնման գործընթացից հրաժարված մասնակիցները

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Շրջանակային համաձայնագրեր	2	17	3	22
Պարզեցված ընթացակարգեր	-	-	1	1

Գնման գործընթացներից հրաժարված մասնակիցներ չեն ունեցել տեղեկատվություն ներկայացրած 20 քաղաքային համայնքները և դրանց ենթակա պատվիրատուները:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուների դեպքում մերժվել է 3 մասնակից՝ երկուսը աշխատանքների կատարման, մեկը՝ ծառայությունների մատուցման համար կազմակերպված ընթացակարգերից:

Գնման գործընթացներից հրաժարվածներից 20-ը պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած ընթացակարգերի մասնակից է: 17-ը հրաժարվել է ապրանքի մատարարակման, 3-ը՝ ծառայության

մատուցման համար հայտարարված գնման գործընթացից: Բոլորը շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումների մասնակից են:

ՀՀ ՊՆ հայտարարված 220 նման ընթացակարգից հրաժարվել է 19 մասնակից: Մեկ մասնակից հրաժարվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմակերպած 20 շրջանակային համաձայնագրերից **(Տեղեկանք 10)**:

Հաշվարկային տնտեսում- Հաշվետու տարվա առաջին կիսամյակում պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայնքների և դրանց ենթակայության տակ գործող պատվիրատուների կատարած գնումների շրջանակներում ձևավորվել է ընդհանուր առմամբ շուրջ 6.691,2 մլն դրամի հաշվարկային տնտեսում, որից 398,8 մլն դրամը՝ աշխատանքների, 5.651,4 մլն դրամը՝ ապրանքների և 641,0 մլն դրամը՝ ծառայությունների գծով: Հաշվարկային տնտեսումը կազմել է ամփոփված և կայացած գնումների նախահաշվային արժեքի 4,35 տոկոսը **(Գծապատկեր 6)**: Խնայողության ցուցանիշը համեմատաբար բարձր է ապրանքների դեպքում: Այն գերազանցում է 8,64 տոկոսը:

Ամփոփված և կայացած 21.855,0 մլն դրամ նախահաշվային արժեքով բաց ընթակարգերի արդյունքում ապահովվել է 791,6 մլն դրամի խնայողություն, ինչը համարժեք է նախահաշվային արժեքի 3,62 տոկոսին:

Արձանագրված հաշվարկային տնտեսումների 82,53 տոկոսը եղել է շրջանակային համաձայնագրերով իրականացված գնումների դեպքում: Այս ընթացակարգով կազմակերպված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման ժամանակ ապահովվել է 5.522,5 մլն դրամի խնայողություն: Այն կազմել է ամփոփված և կայացած հայտարարված շրջանակային համաձայնագրերի նախահաշվային արժեքի 7,73 տոկոսը:

119,3 մլն դրամի կամ նախահաշվային արժեքի 5,15 տոկոսի է հասնում պարզեցված ընթացակարգերի տնտեսումը:

Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևով կատարված գնումների հաշվարկային տնտեսումը կազմել է շուրջ 242,8 մլն դրամ: Այն պակաս է ամփոփված և կայացած գնումների նախահաշվային արժեքի 1 տոկոսից:

Կատարված գնումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրած քաղաքային 20 համայնքների ամփոփած 49.284,2 մլն դրամ ընթացակարգերի հաշվարկային տնտեսումը կազմել է 412,1 մլն դրամ: Այն համարժեք է նախահաշվային արժեքի 0,83 տոկոսին: 172,6 մլն դրամի խնայողություններ են ապահովվել բաց ընթացակարգերի, շուրջ 152,8 մլն դրամի՝ շրջանակային համաձայնագրերի, 57,9 մլն դրամի՝ պարզեցված ընթացակարգերի դեպքում: Ամփոփված և կայացած հայտարարված 5.425,1 մլն դրամ բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևում արձանագրվել է 23,2 մլն դրամի խնայողություն: Այն կազմում է նախահաշվային արժեքի 0,42 տոկոսը:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուները, ներկայացված տեղեկատվության համաձայն, ամփոփված և կայացած հայտարարված 13.987,7 մլն դրամ ընթացակարգերի շրջանակներում ապահովել են 1.179,4 մլն դրամի խնայողություն, ինչը համարժեք է նախահաշվային արժեքի 8,43 տոկոսին: Գումարները տնտեսվել են հիմնականում ապրանքների գնման ընթացակարգերի դեպքում: Այդպիսի խնայողությունները հասնում են 1.015,6 մլն դրամի:

Քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուների հաշվարկային տնտեսումը 617,2 մլն դրամ է կամ ամփոփված և կայացած գնումների նախահաշվային արժեքի 4,35 տոկոսը: Այս դեպքում ևս խնայողությունները բաժին են ընկել հիմնականում ապրանքների ձեռքբերման ընթացակարգերին:

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները ամփոփած և կայացած հայտարարած 76.166,4 մլն դրամ նախահաշվային արժեքով գնումների շրջանակներում ապահովվել են 4.482,4 մլն դրամի խնայողություն: Այն կազմել է նախահաշվային

արժեքի 5,88 տոկոսը: Խնայողության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բարելավվել է: 2014թ. այն կազմել էր նախահաշվային արժեքի 3,45 տոկոսը:

Տնտեսումներից 3.887,3 մլն դրամ եղել է ապրանքների ձեռքբերման, 443,6 մլն դրամը՝ ծառայությունների և 151,5 մլն դրամը՝ աշխատանքների համար հայտարարված ընթացակարգերի հաշվին: Ապրանքների դեպքում հաշվարկային տնտեսումը կազմել է 8,47 տոկոսը, ծառայությունների դեպքում՝ 3,95 տոկոսը, աշխատանքների դեպքում՝ 0,79 տոկոսը:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից ամփոփված և կայացած հայտարարված 8.868,5 մլն դրամ բաց ընթացակարգերի հաշվարկային տնտեսումը կազմել է գրեթե 275,3 մլն դրամ: Այն համարժեք է նախահաշվային արժեքի 3,10 տոկոսին:

Պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից բաց ընթացակարգերով հաշվարկային տնտեսման ամենաբարձր ցուցանիշն ապահովել է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկը: 47,1 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգերի դիմաց կնքվել է 20,7 մլն դրամի պայմանագիր: Տնտեսվել է 26,3 մլն դրամ կամ նախահաշվային արժեքի 55,93 տոկոսը: 214,7 մլն դրամ բաց ընթացակարգերի շրջանակներում ՀՀ Արարատի մարզպետարանը ապահովել է 29,92 տոկոս խնայողություն: Այս ընթացակարգով կատարված գնումների ժամանակ մի շարք պետական կառավարման մարմիններ և պետական հիմնարկներ ընդհանրապես տնտեսումներ չեն ունեցել (**Տեղեկանք 11**):

Հաշվետու ժամանակահատվածում խնայողությունների ցուցանիշը համեմատաբար բարձր է եղել պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից շրջանակային համաձայնագրերով կատարած գնումների դեպքում. այն հասնում է նախահաշվային արժեքի 7,41 տոկոսին:

Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները շրջանակային համաձայնագրերով ապահովվել են 4.055,0 մլն դրամի հաշվարկային

տնտեսում: Տոկոսային արտահայտությամբ առաջատարը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակազմն է՝ 42,76 տոկոս: Իրականացրած 1.616,3 մլն դրամ շրջանակային համաձայնագրերի շրջանակներում ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը խնայել է 365,9 մլն դրամ, ինչը համարժեք է նախահաշվային արժեքի 22,64 տոկոսին:

Այս ընթացակարգով իրականացված գնումների արդյունքում մի շարք պետական կառավարման մարմիններ և պետական հիմնարկներ խնայողություն չեն ապահովվել: Այդպիսիք են՝ ՀՀ Սահմանադրական դատարանը, ՀՀ վերահսկիչ պալատը, ՀՀ ԿԱ ՔԱԳՎ-ն, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն և այլն **(Տեղեկանք 12):**

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձեռով ամփոփված և կայացած հայտարարված գնումները կազմել են 10.638,2 մլն դրամ, որի դիմաց ապահովվել է 113,9 մլն դրամի հաշվարկային տնտեսում: Տոկոսային հարաբերությամբ՝ 1,07 տոկոս:

